ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀԱՆԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/26» ծածկագրով գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ 09.12.2025թ. ժամը 10:00

Ք. Գյումրի Գ. Նժդեհի 3/3

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝	Տաթևիկ Մանուկյան
Հանձնաժողովի անդամներ՝	Սամվել Թումանյան
	Անահիտ Հարությունյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Տաթևիկ Խալաթյան

1. «ՀՀԱՆԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/26» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 05.12.2025թ.-ին ստացված հացադրման վերաբերյալ պարզաբանում տրամադրելու մասին

(Տաթև Մանուկյան)

Հարցադրում 1

Բարև Ձեզ, հարգելի գործընկերներ, Խնդրում եմ պարզաբանել 5-րդ չափաբաժնի տեխնիկական պահանջների վերաբերյալ մի հարց: Տեխնիկական բնութագրում նշված է, որ էլեկտրասրտագրության մալուխը պետք է համատեղելի լինի ML 1500 մոդելի հիվանդի մոնիտորի համար , խնդրում եմ հստակեցնել ընդունելի է ներկայացնել էլեկտրասրտագության մալուխ ,որը պարունակում է 10 վերջույթներով էլեկտրոդներ, թե՞ պարտադիր պետք է լինի ML 1500 մոդելի մոնիտորի համար միացման լար 5 էլեկտրոդներից բաղկացած:

Պարզաբանում 1

Հարգելի հարցատու «ՀՀԱՆԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/26» ծածկագրով գնման ընթացակարգի տեխնիկական բնութագրի 5-րդ չափաբաժնում էլեկտրասրտագության մալուխը պետք է պարտադիր համատեղելի լինի ML 1500 մոդելի հիվանդի մոնիտորին

Հարցադրում 2

Հարգելի գործընկեր 2-րդ չափաբաժնի մասով խնդրում եմ պատասխանել, արդյոք ընդունելի է 33-47 սմ ձեռքի շրջագծով մանժետներ, քանի որ հիմնական միջակայքը մեծահասակի մեծ չափի թևնոցի համար սա է: ԻՆչպես նաև 50/60սմ մեկ խողովակի փոխարեն ընդունելի արդյոք երկու կտորից՝ միակցիչով տարբերա, քանի որ գործարանային մանժետները հիմնականում լինում են մինչև 20 սմ երկարությամբ խողովակով

Պարզաբանում 2

Հարգելի հարցատու ընդունելի է միայն տեխնիկական բնութագրով նշված ապրանքը

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0 :

2.Հրավերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության մասին

(Տաթև Մանուկյան)

- Գնահատող հանձնաժողովը որոշեց գնումների մասին օրենքով սահմանված կարգով և ժամկետում հաստատել «ՀՀԱՆԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/26» ծածկագրով գնման ընթացակարգի նոր փոփոխված հրավերը: Մասնավորապես փոփոխության է ենթարկվել 5-րդ չափաբաժինը: Մալուխի ընդհանուր երկարությունը ՝ ոչ պակաս քան 2,5 - 3 մետր, հաղորդալարերի քանակը ՝ 5 հատ, խրոցի երկարությունը՝ ոչ պակաս քան 4սմ: Ապրանքը պետք է լինի նոր, փաթեթավորված: Մալուխը պետք է համատեղելի լինի ML 1500 մոդելի հիվանդի մոնիտորի համար
- Հաստատել «ՀՀԱՆԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/26» ծածկագրով ընթացակարգի նոր հրավերը և հրավերում կատարված փոփոխության մասին հայտարարությունը հրապարակել գնումների պաշտոնական տեղեկագրում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0 :

Հանձնաժողովի նախագահ՝	Տաթևիկ Մանուկյան
Հանձնաժողովի անդամներ՝	Սամվել Թումանյան
	Անահիտ Հարությունյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Տաթևիկ Խալաթյան